

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա

Թեմա՝ Հայկական տարազը (XIX - XXդդ)

Հետազոտող՝ Սվետլանա Հովակիմյան

Ղեկավար՝ Լ. Իսկոյան (մանկ. գ.թ., դոցենտ)

Երևան 2022թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ավանդական տարազը անցել է պատմական զարգացման և փոխակերպման երկար ճանապարհ: Իբրև հայ ժողովրդի դարավոր մշակույթի դրսևորման մի ձև, որպես էթնիկ ցուցիչ արտահայտում էր հայ էթնոսի մշակութային ինքնատիպությունն ու ազգային խառնվածքի որոշ առանձնահատկությունները: Հիրավի դրանք կիրառական արվեստի կատարելություններ են:

Վաղ շրջանի հագուստին անդրադարձել են օտար պատմագիրներ Քսենոֆոնը, Ստրաբոնը, Հերոդոտը, հայ պատմիչներ Մ. Խորենացին, Փ. Բուզանդը, Ազաթանգեղոսը, Թ. Արծրունին, Ղ. Փարպեցին և այլոք: Հայկական միջնադարյան մանրանկարչության, քանդակագործության, հնագիտական առարկաների, դրամների մեջ պատկերված են տարազի և զարդարանքի նմուշներ: Հայկական տարազի ուսումնասիրությամբ զբաղվել են Վ. Հացունին, Ե. Լալայանը, Ա. Պատրիկը, Վ. Բոյանը, Ստ. Լիսիցյանը, Ն. Ավագյանը և ուրիշներ:

Ավանդական տարազային համակարգը իր կառուցվածքով, առանջին պատմա-ազգագրական խմբերով, տարբեր գործառույթներով իր մեջ ներառում է Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների բնակչության հետևյալ տարազախմբերը. Բարձր Հայքի, Վասպուրականի, Աղձնիքի, Տուրուբերանի, Փոքր Հայքի, Կիլիկիայի, Տրապիզոնի, Շիրակ-Ջավախքի, Սյունիք-Արցախի, Գողթնի, Այրարատ-Թիֆլիսի, Պարսկահայքի:

Ավանդական տարազախմբերում ընդհանուր են ներքնազգեստը, վերնազգեստը, գլխի հարդարանքը, ազանելիքը և զարդերը: Տարբերությունները կտորի տեսակի, ձևվածքի, զարդանախշման, գույների համադրության, հագնելու ձևի, առտնին և տոնածիսական օգտագործման մեջ է:

Ըստ գործածության տարազը լինում էր առօրեական, տոնական, ծիսական: Կարվում էր տնայնագործ քաթանից, մետաքսից, բամբակից, բրդից և թավշից: Ձմռանը հագել են մուշտակ, արա, արխալուղ: Արևմտյան տարազային համալիրում կիրառվել է ավանդական զարդանախշման համակարգը, ասեղնագործվել երկրաչափական, բուսական զարդաձևեր, թռչունների, ճարտարապետական կառույցների, կենցաղային առարկաների պատկերներ, մակագրություններ, արտահայտելով բնության չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի գաղափարը, արգասավորության, բերրիության,

պտղաբերության, ծնող գույզի և մարդը որպես տիեզերքի մանրակերտի պատկերացումների մասին:

Շատ ավելի վաղ շրջանից սկիզբ առնող գունային համակարգը իրենց ներդաշնակ դրսևորումներն են գտել տարազի համալիրում: Կիրառվել է միագույն և բազմագույն գունաշար: Ամենատարածվածը կարմիրն էր՝ կյանքի, կրակի գույնը, կապույտը՝ որպես չարխափան գույն, կանաչը՝ իբրև պտղաբերության, բուսականության, արևի ու նոր սերնդի գույն: Տարածված էին նաև մանուշակագույնը, դեղինը: Իրենց գործնական և ծիսական նշանակությամբ գոգնոց-գոտի-կրծկալ եռակապը դիտվում էր որպես հմայակ-պահպանակ, որը որդեծնությունն ապահովող խորհուրդ ունի: Արևմտյան հատվածի տղամարդու տարազը նույնպես ասեղնագործվում էր ոսկեթելով, տրեգով, բանվածքներով, կապույտ ուլունքների, շոպերի և կապ հանգույցների օգտագործմամբ:

Խիստ ավանդական է գլխի հարդարանքը, որը կրում էին որպես տան բարեկեցության, պատվի գրավական:

Տարազի անբաժանելի մաս են կազմում ազանեղիքը (գուլպա, սոնապան, փաթաթան, ոտնաման): Առանջին տարազախմբերում ազանեղիքի առանձնահատկությունները արտահայտվում էին հյուսման, զարդանախշման, գունային լուծումների, սեռատարիքային դասակարգման մեջ:

Տարազի համակարգի կարևոր բաղադրիչներից է զարդը, որն արտահայտել է կրողի ճաշակը, աշխարհայացքը, կարգավիճակը, կենսական այս կամ այն իրադրությունը (առօրեական, տոնածիսական):

Տղամարդու տարազը անհամեմատ արագ կորցրեց ազգային նկարագիրը, որը արդյունք էր տղամարդկան հասարակական, տնտեսական և ընտանեկան ազատ դրության և միջերնիկ կապերի: Արևելյան գավառներում տարածվել էր «Կովկասյան» կոչված տարազը:

Տարազային փոփոխությունները կապված են նաև հայ ժողովրդի պատմական տեղաշարժերի հետ: 1915թ. ցեղասպանության արդյունքում հայ ժողովուրդը կորցրեց իր բնօրրանը և սփռվեց աշխարհով մեկ: Գաղթականների այն մասը, որ Բարձր Հայքից էր (կենտրոնը Կարին) հաստատվեցին Շիրակում, Ջավախքում, Ախալցխայում, Ծալկայում: Տուրուբերանի (Ալաշկերտ, Մուշ-Տարոն) տարազային համալիրները երկար ժամանակ պահպանվեցին Ապարանում, Սևանի ավազանում: Սասունի տիպը Թալինի և Աշտարակի շրջանում: Վասպուրականինը՝ Երևանում, Աշտարակում,

Էջմիածնում: Իրանահայ տարազը գործածական էր Այրարատում, Վայոց ձորում,  
Երևանում:

Նկարներում ներկայացված են ինքնատիպ բնօրինակներ, որոնք խոսում և վկայում են  
հայկական բարձրարվեստ ավանդական տարազի, որոնք բնորոշում են հայ ժողովրդի  
անցյալից եկող ըմբռնումները, խորհրդանշային մտածողությունն ու ազգային  
գունազգացողությունը:

## ԿԱՐՃ ՎԵՐՆԱԶԳԵՍ

XIX-XX դարերի հայկական ավանդական տարագային համալիրներում իր առանձնահատուկ տեղն ունեն կարճ վերնազգեստը (սալթա, բաճկոնակ, կուրտիչկա, իշիլիկ):

Կիրառական արվեստի այս բացառիկ նմուշները տարածված էին Կարինում, Ալեքսանդրապոլում, Արարկիիքում, Մեքաստիայում, Կեսարիայում, Խոտորջուրում, Տրապիզոնում և այլուր: Կարճ վերնազգեստները լինում էին տոնական և ամենօրյա, կարվում էր թավիշից, մահուդից, մետաքսից, բամբակյա կտորից և որպես կանոնաստեղնագործվում էր ոսկեթելով: Ըստ տարածաշրջանի տարբերվում էին իրենց ձևվածքով, երկարությամբ, ասեղնագործությամբ, նախշազարդմամբ, կտորի տեսակով, գույնով:

Մեքաստիային տիպիկ էր միագույն մահուդե բաճկոնակը ասեղնագործված քնարածն ոճավորված բուսանախշերով: Կարինի թավշե սալթաները դեպի վեր խոյացող կենաց ծառով և ոճավորված ծաղկաձյուղերով են: Ալեքսանդրապոլի կարճ վերնազգեստները աչքի են ընկնում ոսկեկար ճոխ ալիքածն եզրերով և դեպի կրծքավանդակը ձգվող ծլարձակված բուսանախշով: Խոտորջրի, Շապին Գարահիսարի և Տրապիզոնի կարճ վերնազգեստների ասեղնագործությունը հիմնականում լայն շերտով ութմիկ կրկնվող պարուրածն բուսանախշեր են: Կեսարիայի բաճկոնակները պտղաբերություն և հավերժություն խորհրդանշող նախշազարդերով են ոսկեթելով և ուռուցիկ հարթակարով: Կեսարիայում տարածված էին երեխաների ոսկեթել ճոխ ասեղնագործությամբ բաճկոններն ու ելակները:

## ՇԱՏԱԽԻ ՇԱԼ

Շատախ գավառը հայտնի էր բրոյա կտորի արտադրությամբ: «Շատախի շալը» գործում էին շալագործական մանուֆակտուրաներում և տնայնագործական մի քանի ձեռնարկություններում: Միայն Թաղ գյուղում յուրաքանչյուր տարի 600-700 փաթեթ շալ էին գործում: Շալը գործում էի անգորական այծի բրդից, գետնին ամրացված հենքի վրա, երկերեսանի նախշով: Զարդարում էին շեղանկյուն, եռանկյուն նախշերով, զիգզագ և ուղղաձիգ զծերով և բուսանախշերով:

Շատախի շալը բարձրորակ կտոր էր համարվում և մեծ պահանջարկ ուներ: Վաճառվում էր Եվրոպայում, Կ. Պոլսում, Հյուսիսային Միջագետքում, Դիարբեքիում:

### ՇԱՏԱԽՑԻ ԿՆՈՋ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶ

Վասպուրականի նահանգի Շատախ գավառի տարազը իր ինքնատիպությունից զատ ընդհանրություններ ունի Վանի, Մոկսի Մուշի, Կարճկանի, Բաղեշի, Մասունի տարազների հետ:

Շատախի կանանց վերնազգեստը (անթարի) կարվում էր գերազանցապես կարմիր գույնի գծավոր, մեծ նշաձև զարդերով բամբակե կտորից և հայտնի «շատախի շալից»: Ուներ երկար թևեր, կանգնած օձիք, թևքաբերանը և քղանցքի կողքերը ճեղքով էին, առաջամասը բաց: Վերնազգեստի տակից հագնում էին բամբակե կարմիր կտորից շապիկ և վարտիք: Կրծկալը (սրտանոց) և զոզնոցը (մեզար) կարվում էին բրդե կտորից, ասեղնագործած խաչկար եղանակով երկրաչափական նախշերով, ոճավորված բուսանախշերով, թռչունների և կենդանիների պատկերներով: Գոզնոց կապում էին ամուսնացած կանայք: Շատախին բնորոշ էր մետաքսյա քամթելերի գործածությունը, որպես պահպանակներ. Չար ուժերը պիտի խճճվեին և կապվեին ծամթելերի կապ հանգույցների ու հյուսքերի մեջ:

Շատախի տղամարդու շապիկը տնայնագործական սպիտակ քաթանից էր, կրծքի բացվածքը աջ կողմից, կոճկվում էր մեկ կոճակով: Օձիքը, թևքաբերանները ասեղնագործվում էին երկրաչափական նախշերով: Շալվարը և կարճ վերնազգեստը կարվում էին Շատախի շալից: Գոտին 2-3 մետր երկարությամբ բրդյա գունավոր կտոր էր, որը միաժամանակ զրպանի դեր էր կատարում: Գոտու մեջ տեղավորում էին ծխախոտի տոպրակը, ծխամորճը... Գդակը թաղիքից էր, փաթաթված ծոպավոր գլխաշորով:

### ՄՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ

Մյունիք-Արցախի պատմա-ազգագրական մարզում հայ մարդը ստեղծել և պահպանել է ինքնատիպ նյութական մշակույթ, որի բաղկացուցիչ մասն էր տարազը, որը հարատևել է մինչև XX դարի կեսը: Մյունիք-Արցախում գոյություն ուներ կնոջ տարազի երկու համալիր, որոնք կոչվում էին հայվարի և քաղքավարի: Հայավարին

Արցախին հատուկ ավանդական տարազն էր: Բաղկացուցիչ մասերից է Կարմիր գույնի կտավից շապիկը, որի վրայից հագնում էին «իրեֆիշկանի» արխալուղը՝ զգեստը, որը կողքերին երկար բացվածքներ ուներ, կրծքամասը բաց էր: Կարում էին մուգ կանաչ մետաքսյա կտորից, որը իրենից ծաղիկներ ուներ: Կարում էին նաև կապույտ և մանուշակագույն կտորից: Ջանգեգուրում հարգված էր կանաչ գույնը, որը առնչվում էր բուսականության, երիտասարդության, բեղմնավորման հետ, իսկ նախաքրիստոնեական շրջանում կապվում էր ջրի, անձրևի և կին աստվածության հետ:

Տոնական վերնազգեղաստի զարդերիզը մետաքսից էր, ամենօրյայինը բամբակյա կտորից: Ջգեստը սրածայր թևքաբերանով էր, որի եզրերին շարվում էին եռանկյունաձև զարդակախիկներ՝ սուրմաներ: Վերնազգեստի եզրերը զարդարում էին ոչ միայն կարմրագույն երիզով, այլև սև թավշյա ժապավենով, որի վրա ոսկե թելով ասեղնագործում էին ուռուցիկ հարթակարով բուսական և երկրաչափական նախշեր: Արխալուղը գոտևորվում էր լայն և երկար մետաքսե գոտիով: Տոն օրերին մուշտակ քույք էին հագնում, որը վառ կարմիր թավշից էր, երիզված կզաքիսի և վայրի կատվի մորթուց: Կուրծքն ու թևքերը զարդարում էին կոճակներով և գնդիկներով: Ոտքին հագնում էին նախշազարդ գուլպա և չմոշկներ կամ քոշեր՝ կանաչ գույնի, սրածայր: Գուլպաներին բնորոշ էր թաթի երեսին և տակին սպիտակ գույնի սեղանաձև ուղիղ հյուսվածքով կատարված նախշը, թաթի երեսն ու տակը իրարից բաժանող նեղ շրջանակը, որը հարդարվում էր թռչունների, գլխիվայր սլաքների, զիզգազ նախշերով:

Գլխի հարդարանքը բարդ էր, բաղկացած մի շարք բաղկացուցիչ մասերից: Մազերի հարդարման և գլխի հարդարանքի մասերի հավաքման համար երկար ժամանակ էր պահանջվում: Ստիպված էին մի քանի օր կապած պահել: Գլխի հարդարանքին որոշակի ձև տվող մասերից էր կոպին, որի ներքևի եզրին կապում էին ճակատազարդ-դրամաշաքը, որի մեջտեղում տեղադրվում էր մեծ դրամ՝ միջանոց արծաթից և ոսկուց: Կարևոր մաս էր բունքազարդը, որը սնամեջ գնդիկների շարան էր, յուրաքանչյուր կողմից 6-9 հատ, որոնք ամրացնում էին կանաչ կամ կարմիր թավշյա կտորից կարված եռանկյունաձև ականջակալի վրա: Գլխի հարդարանքի մասերից էր մեծ գլխաշորը: Մյուսիքում գլխի հարդարանքը ապահովում էր տան բարեկեցությունը: Գլխաշորը հավատքի հետ կապվող նվիրական առարկա էր համարվում: Սրբավայրեր այցելած կանայք գլխաշոր էին նվիրաբերում:

## ԳՈՂԹՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ

Գողթնը, որը նախկինում Վասպուրականի նահանգում էր, իսկ հետո Սյունիքի, ուներ կյութական և հոգևոր մշակույթի, այդ թվում զգեստի յուրօրինակ առանձնահատկություններ:

Կնոջ զգեստը շատ նման էր Սյունիք-Արցախի զգեստներին: Տարածվածը ավանդական զգեստն էր, որը ծագելով հեռավոր անցյալում հարմարեցվել է գավառի լեռնային, կլիմայական պայմաններին և հարատևել է մինչև XIX դարի վերջ:

Կնոջ տարազի ավանդական համալիրի բաղկացուցիչ մասերն էին սալտակեղենը, վրայի շապիկը, վերնազգեստը, գոտին, վերարկուն, կրծկալը, գլխի բարդ հարդարանքը, ազանեկիքը: Վերնազգեստը (արխալուղ) մուգ կարմիր կտորից էր, երիզը կանաչ մետաքսե կտորից: Առաջի աջ և ձախ փեղքեր նեղ էին և ամբողջական, գոտկատեղը կարով, կողքերին մեկական բացվածք, թևքերը լայն աղեղնաձև թեզանիքներով: Հարուստ խավի կանայք վերնազգեստի վրայից հագնում էին վերարկու-քուրքը, որը կանաչ, կապույտ, մուգ կարմիր թավշե կտորից էր, թևքերը շատ երկար, անութներում ճեղքերով: Քուրքը կյութով, հարդարմամբ և ձևվածքով նման էր Սյունիք-Արցախի քուրքին: Գոտին բամբակից էր կամ մետաքսից, մեջքին էր կապվում վերնազգեստի վրայից: Կրծկալը, ի տարբերություն Հայաստանի մյուս ազգագրական շրջանների, կապվում էր վերնազգեստի վրայից կրծքի բացվածքը ծածկելու համար: Ոտնամանը կանաչ գույնի չմոշկն էր և քոշը, որոնք կարվում էին Ագուլիսում և Ցղնայում: Հագնում էին երկար գուլպաներ, հարդարված ծաղկային և նշան գարդերով, գծանախշերով: Խիստ բարդ էր կնոջ գլխի հարդարանքը, որի մասերից էր ճակատնոցը, որի եզրին ամրացվում է արծաթե երկարավուն գարդատախտակներից կազմված շարանը: Գողթնին հատուկ էր նաև բարձր ճակատնոցը (ղինգ): Բաղկացուցիչ մասերից էր շղարշը, քթակալը:

## ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ

Բարձր Հայքի տարազներին բնորոշ են հարուստ, բարդ ու նրբին ղեկորատիվ բազմաթիվ տարրերը:

Կանանց ամեննօրյա, հարսանեկան, տոնական, զգեստներն ունենին միատեսակ ձևվածք: Ամենօրյա վերնազգեստը մահուղից էր (ջուպպա), տոնականը՝ թավշից

(խրխա), մետաքսից (ղատիֆա, լոհոո), բրդից (փութալի): Կրում էին կրծկալ, գոգնոց, գոտի: Գլխարկից կախվում էր ոսկե դրամներով զույգ մարգարտաշարը, ճակատի զարդերից է կրկանի դրամաշարը՝ կենտրոնում խոշոր ոսկեդրամով, մարգարիտներով ու ոսկեզարդերով «կտուցը» և «վարդը»՝ ժանյակե ծաղկանախշով ու արաղաղներով: Գլխի շղարշն իր զարդարուն մանրամասներով նույնանում է ուրարտական գլխաշորերի հետ: Հագուստների մուգ գույները՝ կարմիրը, կապույտը, մանուշակագույնը, կանաչը, շագանակագույնը ներդաշնակում են ոսկեթել և արծաթաթել ճոխ նախշերին: «Վարդերի» արաղաղները բեղմնավորման, որդեծնության համար են, միաժամանակ անգակի հետ են կապվում և չարը վանում: Ճյուղավոր ծաղկած ծաղիկների և նշաձև ծառերի պատկերները ընտանիքի շարունակության և բարգավաճման իմաստն են կրում: Մետաքսե գոտիները եկեղեցիների, կենցաղային և այլ առարկաների պատկերներով ևս «կենաց ծառեր» ունեն և գոտին ինքը ժողովրդական պատկերացումներում արգասավորող է ու պաշտպանող: Զգեստների վրա պատահում են ծաղկազարդ՝ պտղաբերություն ու բարիք բերող վիշապներ: Բուսանախշերով, թռչնանախշերով, ոճավորված վիշապներով, երբեմն՝ միագույն, շեղանկյուն զարդանախշերով էին գուլպաներն ու սոնապանները: Ոտնամանները կրկնակի են՝ «մաս բարուձ» դեղին, փափուկ կաշվից: Տարեց կանանց հողաթափերը կարմիր են. Ըստ հնագույն սովորույթի միայն ամենապատվելի մարդիկ իրավունք ունեին կարմիր կոշիկ կրելու:

Տարածված էին դրամաշար-վզնոցները: Դրամը լուսնի խորհրդանիշն է՝ վանում է չարքերին, աճ, հարստություն, բազմացում ապահովում: Կանայք ականջօղեր, մատանիներ էին կրում, բուսանախշերով զույգ ապարանջան, սաթե, զիշերաքարե, մարջանե, մարգարտե ուլունքները, որոնց հատկություններից էին չարից պաշտպանելը, բարիք բերելը և հիվանդություններ բուժելը:

Կարինում գործածական էր մանկական տոնական տարազի համալիրը, որի օրինակը ցուցադրվում է թանգարանում:

Կարնո նահանգի տարազի տարատեսակները տարածված էին Կարսում, Բագրևանդում, Արդահանում, Արդվինում, Խոտորջուրում: 1829-1830թթ գաղթի հետևանքով Բարձր Հայքի զգեստների ձևերը գաղթականների հետ տեղափոխվեցին նրանց մոտ բնակավայրերը՝ Շիրակի, Զավախքի, Ախալցխայի, Ծալկայի և այլ շրջանների:

## ԶԵՅԹՈՒՆՑՈՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ

Զեյթունի տարազը պատկանում է Կիլիկյան տարազախմբին, առաջացել է միջնադարում՝ Բարձր Հայքի և Վասպուրականի զգեստների ձևերի միաձուլումից բնակլիմայական պայմաններին համապատասխան:

Զեյթունում կրկնվում են Վասպուրականի կանանց շապիկը, դեյրա-ֆստանը և անթարին (բամբակե և բրդե գծավոր կտորից), բայց գոգնոցն առանց նախշերի է:

Տղամարդկանց տարազի հիմնական տարրերը Բարձր Հայքից էին անցել այդ թվում նաև քաղաքային իշխանականը՝ հնագույն ծիրանիի ձևով պահպանված թիկնոցով հանդերձ: XIX դարից այն օձիքավոր վերարկուի էր նմանվել, սակայն գլխի փաթաթանը և կտորե գոտին անփոփոխ էին մնացել, որ երևում է կիլիկյան միջնադարյան մանրանկարների պատկերներից: Գոտու մեջ էին պահում ծխախոտի քսակը, կաշվե պայուսակը, ծխամորճը, դաշույնը:

Քաթանե շապիկի եզրերին նախշավոր չիթ էր կարվում, կրծքին և թևքաբերաններին երկրաչափական նախշեր էին ասեղնագործվում, կրծքի եզրին մանր կապույտ աչքի ուլունքներ էին կարվում: Շախիկի վրայից հագնում էին ելակ և այծի մազից աբա: Կապույտ մահուղե տաբատի երկու կողմերն ասեղնագործվում էին ոսկեթելով կամ սև մետաքսաթելից հյուսված տրեզով: Սպիտակ, մոխրագույն բրդե գուլպաներն ունեն լայնակի շերտեր երկրաչափական նախշերով, հասնում են մինչև ծունկը և ամրացվում թելակապերով: Տղամարդկանց ոտնամաններից է կարմիր կաշվե փոստալը, որի առջևի ծայրը հասնում էր սրունքին, խոր, վարդագույն էմենին, տնային թեթև կիսակոշիկ մեսուր: Ամռանը առջևի մասում ծոպերով գերմանական լայն մոյլ էին կրում, ճանապարհորդելիս՝ տրեխը:

## ՏՐԱՊԻԶՈՆՑԻ ՀԱՅ ԿՆՈՋ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶ

Հայաշատ կենտրոն Տրապիզոնի տարազը ձևավորվել է դեռևս VIII դարում Հայաստանի տարբեր վայրերից (Սյրարատ, Վասպուրական), XI դարում Անիից այստեղ հավաքված հայերի ամենատարբեր տարազաձևերի միաձուլումից:

Կանանց վերնագգեստը (անթարի) կարվում էր մետաքսե մանուշակագույն, կանաչ, մուգ կարմիր կտորից, երիզվում ոսկեթել տրեզով ու փուլերով: Կոճակները գնդաձև էին, պատրաստված մետաքսաթելից: Տրապիզոնի վերնագգեստի բնորոշ

հատկանիշը թևաբերանին կարվող ծալագարդն էր և մետաքսե ասեղնագործ անդրավարտիքը:

Վերնազգեստի վրայից հագնում էին կարճ բաճկոն (ֆերմենի) մուգ կարմիր, մանուշակագույն թավշից: Երիզվում էր 1-3 շաբթ հարթ տրեզով, զարդարվում ոսկեթել ասեղնագործությամբ ու փուլերով: Բնորոշ առանձնահատկությունը առաջամասի երկու անկյուններում ասեղնագործած S-աձև նախշն է:

Գոտին վանդակավոր էր, ծայրերին ծուպեր հենքի թելերից: Կապվում էր վերնազգեստի վրայից կոնքամասում, երկտակ ծալած վիճակով: Գոտու գործածության այս ձևը հատուկ է միայն Տրապիզոնին:

Գլխի հարդարանքի հիմնական մասը արծաթե թասակն է:

### ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶ

Բարձրաճաշակ է երևանցի նոջ տարազը (շապիկ, զգեստ, գոտի, մուշտակ, բող, գլխաշոր, ճակատկալ, ազանեղիք): Այն կրել են Արարատյան հովտի բնակավայրերում: Երևանի կնոջ տարազը ընդհանրություններ ունի թիֆլիսահայ կնոջ տարազի հետ: Այն Վրաստան է տեղափոխվել Արարատյան դաշտից արտագաղթած հայերի միջոցով: Հայտնի նկարիչ Հակոբ Հովնաթանյանը XIX դ. մի շաբթ կանացի դիմանկարներում անմահացրել է թիֆլիսի հայ հարուստ դասի տարազը:

Վերնազգեստը ամբողջական էր, կարված միագույն կամ իրենից բուսանախշերով մետաքսյա կտորից: Սպիտակեղենը կարվում էր բամբակյա կտորից:

Գոտի-գոզնոցը կապվում էր կանանց տոնական վերնազգեստի վրայից: Այն մետաքսյա երկտակ կտոր էր, գոտկատեղի շրջագծի չափ, որին միացվում են ոսկեթել կամ արծաթաթել ասեղնագործությամբ վերնազգեստի քղանցքին հասնող լայն ժապավենակախիկներ, որը ուներ Կարինի գոզնոցի դերն ու իմաստը: Գոտի-գոզնոցը գործառույթայինից բացի ուներ հատուկ իմաստային նշանակություն: Գոտնորել իրանը նշանակում էր պաշտպանել, պահպանել այն կրող անձին վնասվելուց, հիվանդությունից, չարից: Որովայնի վրայից իջնող ժապավենների, ինչպես և գոզնոցների բուսանախշերը պտղաբերության զաղափարի խորհրդանշաններն էին, կոչված ապահովելու բարեհաջող որդեծնություն: Երևանյան տարազի համալիրի երկրորդ տարրերակում կապում էին արծաթե գոտի:

Ոճավորված բուսանախշերով զարդարված էին նաև զգեստին ամրացվող կրծկալը և երկար թևերը:

Կանայք պարտադիր կրում էին մարգարտահյուս թավշե ճակտնոց վրայից երկտակ, կարճ, ալիքաձև եզրերով շղարշ: Վերարկուն կամ քուրքը կարվում էր մուգ կապույտ, մուգ կարմիր, մուգ կանաչ գույնի թավշից, երիզված մորթով: Վերարկուն ընդհանրություններ ուներ Սյունիք-Արցախի, Գողթնի վերարկուի հետ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, դարերով ստեղծված տարազը աստիճանաբար վերացավ և դարձավ ընտանեկան մասունք, թանգարանային նմուշ: Միայն Սյունիք-Արցախի, Ջավախքի և Ապարանի բնակչության մեջ երկար ժամանակ պահպանվեց իրենց հատուկ տարազը: Իր ազգային ինքնատիպությունը չկորցնելով հայկական տարազաձևերը ներկայանում են որպես կիրառական արվեստի անգերազանցելի նմուշներ և կարևորվում են որպես ուսումնասիրման աղբյուր, կիրառական արվեստի մյուս ճյուղերի, ժամանակակից հագուստի գեղագիտական ճիշտ ձևավորման ու մոդելավորման գործում: Մտեղծագործական որոնումների անսպառ աղբյուր կարող են ծառայել տոնա-ծիսական միջոցառումների, ազգագրական խմբերի ճիշտ հանդերձավորման ու զարդանախշման գործում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նազիկ Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը (XIX դ. – XX դ. սկիզբ),  
Երևան, 1983թ. 113 էջ:
2. Հայկական տարազ XVIII-XIX դարեր, ավրոմ – կատալոգ, Երևան, Հայաստանի  
պատմության թանգարան, 2014թ.:
3. Առաքել Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1967թ.: